

ԱՐԴԵՕՒՔ ԿՈՐԻԿԵՆ Է ՔԱՐԳՄԱՆՆԸ ՅՈՐԻ ԳԻՐԲԸ

Հինգերորդ դարի արշալոյսին Աստուածաշունչ Մատեանի թարգմանումը հայերէն, բացի զուտ ազգային արժէք լինելուց, ունի նաեւ համաքրիստոնէական նշանակութիւն: Բայց եթէ քրիստոնեայ որոշ ազգերի մօտ այսպէս թէ այնպէս յայտնի են Սուրբ Գիրքը թարգմանողների, խմբագրողների, բարեկրթագողների անունները, ապա հայ մատե- նագրութիւնը դրա մասին բաւականին համեստ տուեալներ է պահպանել: Հասկանալի է՝ Սուրբ Գիրքը թարգմանած Ոսկեդարի հայ գրագետները պատմութեան մէջ յիշա- տակուելու դոյզմ-ինչ նպատակ չունէին, եւ Ս. Գիրքը հայացնելու եւ ժողովըր- դակեանացնելու ծառայութիւնն արդէն նրանց համար բաւական էր: Եւ թարգմանչաց գործի ղեկին կանգնած Ս. Մեսրոպի ու Ս. Սահակի կողմէն նրանց վարանուտ աշա- կերտները պարզապէս իրենց յիշուելու արժանի չէին համարում: Այնուհանդերձ, կարծում ենք բանասիրական եւ պատմական հետաքրքրութիւնների շրջանակից ամենեւին դուրս չէ Աստուածաշունչը հայացնող թարգմանիչների ինքնութեան պարզումը:

Այս հարցն ուսումնասիրող գիտնականները երկու իրերամերձ կարծիքներ են յայտնել: Մխիթարեան միաբաններից անուանի հայագետ Ներսես Ակիմեանը, օրինակ, ենթադրում է, թէ Աստուածաշունչն ամբողջութեամբ թարգմանել են հայ գրչութեան հիմնադիրներ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը, եւ ւսելացնում է՝ «Անոնք չէին կրնար այնպիսի Սուրբ, Աստուածային մատենին թարգմանութիւնը տրմուղ, դեռակիրթ աշակերտներու յանձնել...»¹: Սակայն Ն.Ակիմեանը ինքն իսկ մէկ հաւաստի փաստ է բերում, որով հերքում է իր այս կտրուկ պնդումը. Սամուսատում «Առակաց գիրքը» թարգմանելիս Մաշտոցին գործակցում էին Յովհ. Սելեդեցացին ու Յովսէփ Պաղանցին:

Հայ դպրութեան հիմնադրման ու տարածման, թարգմանչաց գործի կազմա- կերպման մասին ամէնից մանրամասն տեղեկութիւններ հաղորդած պատմիչը՝ Կորիւնը լուսն է, թէ Մաշտոցի աշակերտներից ով յատկապէս ինչ է թարգմանել, եւ այդ մասին բերում է ընդամենը մէկ որոշակի փաստ. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յառակացն Սողոմոնի... որ եւ գրեցաւ ձեռամբ այնորիկ գրչի (Մաշտոցի)» (Կոր.Ը)²: Իսկ արդէն Հայաստանում, շարունակում է պատմել Կորիւնը, թարգմանութիւնն իրա- կանացնում են Ս. Սահակն ու Ս. Մաշտոցը.

«...յառաջադէմն Պօղոս՝ քովանդակ առաքելական զնդովն, հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանում Գրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան» (Կոր.ԺԱ): Ապա քիչ յետոյ Կորիւնը նշում է, թէ ինչ «պրտալիր ուրախութիւն» էր, որ հայացուցեցին «ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ եւ յառաջագոյն յաւիտենիցն, եւ ապա եկելոցն, սկզբանն եւ կատարածի, եւ ամենայն աստուածատուր աւանդութեանցն» (անդ): Այս հատուածից կարելի է ենթադրել, ինչպէս վարում է մեծանուն հայագետ Մանուկ Աբեղեանը, որ Մաշտոցը եւ Սահակն են ամբողջութեամբ թարգմանել-աւարտել Մանուկ Աբեղեանը, որ վարպետական գրքերը, Աւետարանները, առաքելների թղթերը՝ «ամենայն աստու- ածատուր աւանդութեանցն» հետ միասին, նոյնիսկ «Յայտնութիւն Յովհաննու» գիրքը, քանի որ նրանում է խօսուում «կատարածի», այսինքն՝ աշխարհի վերջի մասին, այսինքն՝ ողջ Աստուածաշունչը:

Միւս տեսակետի հետեւորդները պնդում են, թէ Աստուածաշունչի տարբեր հատուածների թարգմանութիւնը պատկանում է 5-րդ դարի տարբեր հեղինակների՝ յենուելով Ս. Գրքի տարբեր գլուխներում առկայ ռեկան զանազանութիւնների վրայ, որոնք կարող էին առաջ գալ նախ եւ առաջ նրանից, որ դրանք պատկանում են

տարբեր հեղինակների գրչին: Վերևում արդեն յիշատակուած Ն.Ակինեանն իր նոյն յօդուածում նաեւ ընդունում է՝ «Զգալի է անոնց (Սուրբ Գրքի գլոխներին-Ն.Պ.) ոճի ու քարգանձութեան արուեստի զանազանութիւնը», օրինակ՝ Մննդոց, Առակաց, Սաղմոսք, ողջ Նոր Կտակարանը հարագաս են բնագրին, մինչչեռ Յուդիթ, Յոբ, Մարգարէներին որոշ հաստուածների ճշգրտութիւնը սուծել են՝ «Քարգանձին զարդասիրիկ ցանկութիւնը յագեցնելու համար»: Այսինքն՝ Ակինեանն ինքն էլ ընդունում է, որ Ս.Գրքի քարգանձութեանը մասնակցել են տարբեր անձինք:

Ե-րդ դարի դասական գրարարում դարերի միջից ու հարիւրաւոր գրչագրերի տողերից պահպանուել են ու տարբերակուում են Եզնիկեան, Կիրեղեան, Ագա-քանգեղեան եւ այլ ոճերը: Հենց իսկ Աստուածաշունչի մէջ նոյնիսկ զանազանում են շարահիւսութեան եւ բառերի տարբեր կիրառութիւններ, որոնք թեպտորուած են, նախ, սուեալ գլխի բովանդակութեամբ, բայց նաեւ՝ քարգանձի-հեղինակի լեզուական ճաշակով: Բանասէր Յովսէփ Գաթրեանը Աստուածաշունչի մէջ մասնանշում է մի-մեանցից տարբերուող հետեւեալ ոճական խմբերը ներկայացնող գլոխները՝

- ա) Մննդոցից մինչեւ Մնացորդաց,
- բ) Եզր եւ Նեեմի,
- գ) Յուդիթ եւ Եսթեր,
- դ) Երեմիայի թուղթ առ գերեալսն ի Բաբելոն,
- ե) Մակարայեցուց Ա-Գ,
- զ) Աւետարանք,
- է) Պետրոսի եւ Յուդայի թուղթք,
- ը) Պօղոսի թուղթք:

Անշուշտ Ս. Մեսրոպը եւ Ս. Սահակը Սուրբ Գիրքը քարգանձեիս միայնակ չէին, եւ նրանց գործակցում էին Ոսկեդարի տաղանդաւոր Քարգանձիչները: Ինչպէս Մաշտոցը նոր դպրութիւնը տարածում էր «Հանդերձ այլովք եւս սպասաւորօք Աւետարանին», կամ գրեթէ բոլոր ձեռնարկները կատարում էր «...հանդերձ աշակերտօք բազմօք», այնպէս եւ աշակերտները նրան պէտք է «ուղեկցէին» նշանակութեամբ ու ծաւալով հսկայական քարգանձութիւնները կատարելիս:

Կայ այս երկրորդ տեսակէտն ապացուցող մէկ այլ փաստ, որը դեռեւս լուրջ մեկնաբանման կարիք ունի: Խօսքն աւանդաբար Ե-րդ դարին վերագրուող եւ «Մաշտոց» ծողովածուի նախաստիպը համարուող «Օրհնութաբեր ցուցակի» մասին է, որում Կորիւնը (եւ ոչ միայն նա) ուղղակի քարգանձիչ է համարուում. «Զկանոն Ապաշխարոցաց, գոր արարեալ է Կիրեղի Երուսաղեմացույ, բերին Կորիւն եւ Հնձակ քարգանձիչք: ...Զկանոն Ագապից, ոգեհանգստի եւ գեհեանայաթաղին, գոր արարեալ է Եփրեմի Ասորույ, երբը Ղազրիկ» եւ այլն: Արդէն մօտ 1600 տարի Հայոց Սկեղեցին Ոսկեդարի եւ հետագայի հայ մտքի գագաթներին սրբացրել է յատկապէս իրեն քարգանձիչների:

Եթէ, ուրեմն, ընդունում ենք, որ Աստուածաշունչի հայերէն բնագիրը տարբեր քարգանձիչների ջանադրութեան արդիւնք է, ապա առաջ է գալիս այն բնական հարցը, թէ ովքեր են քարգանձիչները եւ Ս. Գրքի որ հաստուածն ով է քարգանձեի: Մաշտոցին գործակցած քարգանձիչներից պատմութիւնը պահպանել է Եզնիկի, Կորիւնի, Յովսէփ Պաղմացու, Յովհան Սկեղեցացու, Տէր (Տիրայր) Խորանանցու, Մուշէ Տարօնեցու, Աբրահամ Խոստովանող Զեմակցու, Արձան Արծրունու անունները: Սակայն բացի առաջին երկուսից, դժբախտաբար միւսներից ինքնագիր երկեր մեզ չեն հասել, ուստի անհնար է նրանց լեզուի մասին պատկերացում կազմել՝ որեւէ կարծիք յայտնելու համար:

Պատմական տուեալների չգոյութեան պարագայում այս հարցի պարզամտման բանալի կարող է լինել Ե-րդ դարի հեղինակների երկերի ու Աստուածաշունչի բնագրի

համեմատութիւնը: Մամաւանդ որ, կրկնեմք, միեւնոյն երկի միջնադարեան տասնեակ գրչագրերում ու տարբերակներում ընդհանուր առմամբ պահպանուում է հեղինակի ձեռակազմակամ, շարահիւսակամ, ոճական լեզուամտածողութիւնը:

Լեզուական ու ոճական փաստերի մամուլեան իմաստով առաջին տպաւորութեան հիման վրայ մկատելի է, որ միմեանց առնչակցութիւններ ունեն Սատուածաշնչի Յորի գրքի ու Կորիւնի Վարք Մաշտոցի լեզուները: Ընդ որում, այդ առաջին տպաւորութիւնն առիթ եղաւ երկու գրքերի հետագայ համեմատական քննութեան, որի համառոտութիւնը կը փորձեմք ներկայացնել ստորեւ: Նկատի առնեմք, որ եթէ Յորի Քարգանուութիւնն իրօք Կորիւնիինն է, ապա «Վարքի» ու «Յորի» լեզուաոճական առանձնայատկութիւնները պէտք է ակնառու լինեն:

Բանաւեր Յ.Թորոսեանն իր մի ուսումնասիրութեան մէջ Յորի Քարգանուութիւնը վերագրում է Եզնիկին՝ առանց լեզուական փաստերով հիմնադրելու իր այդ պնդումը. «Ո՞վ պիտի կրնայ ուրամալ, թէ այդ գիրքերու Քարգանուութիւնը Եզնիկայ աղամանդիկ գրչէն ելած չըլլայ, որոնց մէջ կը զգացուի անոր կուռ, սեղմ, զօրեղ եւ դասական լեզուն»: Իսկ Կորիւնիինն է վերագրում Դատաւորաց, Թագաւորաց, Եսքերի, Յուդիթի եւլն գրութեաները՝ «ուր իր ճաշակին եւ գրչին վայել՝ ճոխ, գեղեցիկ մկարագրներ, յուզիչ տեսարաններ, վսեմ երգեր եւ օրհնութիւններ կան»⁶:

Յայտնի է, որ Եզնիկն ու Կորիւնը Բիւզանդիայից իրենց հետ Հայաստան բերեցին «հաստատուն օրինակք սատուածատուր գրոցն» (Կոր.ԺԹ): Նրանք Հայաստան վերադարձան Եփեսոսի ժողովից (431թ.) յետոյ, ապա Ս. Սահակը «...անեալ հանդերձ Եզնիկաւ գլառաչագոյն գլանկարծակի գփութանակի Քարգանուութիւնս հաստատեր հշմարիտ օրինակօք բերելովք: Սւ շատ եւս մեկնութիւն գրոց Քարգանեւին» (Կոր.ԺԹ): Աւելի ուշ Խորենացին նոյն փաստի մասին ասում է՝ «վերստին յօրինել նորոգմամբ»:

Ըստ այս տուեալի, Ս. Գրքի հայերէն Քարգանուութեան վերջնական սրբագրումն ընկնում է 431-434 թուերի միջեւ, նշանակում է՝ Կորիւնը եւ միւսները մինչ այդ Քարգանուութիւնն արել-վերջացրել էին (Կորիւնն իր «Վարք Մաշտոցի» երկը գրել է 443-451 թուերին), որից յետոյ Քարգանուութեանը միջամտում եւ «հաստատում» է Ս.Սահակը: Այսինքն՝ երբ ասում ենք, թէ Քարգանուութիւնը Կորիւնիինն կամ մէկ ուրիշինն է, պէտք է հաշուի առնել Ս.Սահակի կատարած միջամտութիւնը եւս: Սակայն, կարծում ենք, վերջինիս խմբագրումը կարող էր առնչուել առաւելարար աստուածաբանական մտքին, իսկ Քարգանակի-հեղինակի ոճը, այսպէս թէ այնպէս, ընդհանուր առմամբ պիտի պահպանուէր:

Կորիւնի լեզուն բանասիրութեան մէջ համարուել է յրբից, ի տարբերութիւն դասական շրջանի այլ հեղինակների՝ Եզնիկի, Սղիշէի, Ագաթանգեղոսի: «Կորիւնը յօրինում է շատ ճոռում, գրում է Մանուկ Աբեղեանը, աւելորդ գարդերով ու կրկնութիւններով, ինչպէս իմքն է ասում՝ «ժողկեցնում է»: Նրա գրածը յաճախ մութն է նաեւ անկանոն լեզուի պատճառով... Վրան աւելացրէք եւ բնագրի մասամբ աղճատած լինելը, եւ հասկանալի կը լինի, թէ ինչու՞ այդ փոքրիկ գիրքը շատերի համար դժուար լինելը, եւ հասկանալի կը լինի, թէ ինչու՞ այդ փոքրիկ գիրքը շատերի համար դժուար միջնադարում (հաւանարար 7-9 դարերում) առաջ եկաւ «Վարքի» պարզեցուած մի նոր միջնադարում (հաւանարար 7-9 դարերում) առաջ եկաւ «Վարքի» պարզեցուած մի նոր խմբագրութիւն՝ «Փոքր Կորիւն» պայմանական անունով եւ «Ի յիշատակի պատմութեան վարուց երանելոյ սուրբ վարդապետին Մեսրոպայ, գոր սասցեալ է նորին աշակերտի Կորեան» խորագրով:

Այսպես ուրեմն, ֆերակամական մի քանի յատկանիշներ Յոբի գրքում եւ Վարբում գրանարուած են ցայտունօրէն, եւ անհնար է չնկատել, որ դրանք ուղղակի համակարգային բնոյթ են կրում:

ա) Կորիւնի երկուստեք առատօրէն կիրառուած է սեռական հոյովով ենթական, եւ այս հնարամէք յանախակի հանդիպում է նաեւ Յոբի գրքում.

ՅՈՒՐ.

Եւ լուծալ երից բարեկամացն գշարիսն (Բ.11),
կրկնեալ անդրէն Յոբայ ասէ (Ձ.1),
որոց ոչ գոյ թիւ (Ե.9),
դարձեալ կրկնեալ Տեառն յամպոյն ասէ (Ո.1),
կրկնեալ անդրէն Եղիփազու թիմնացոյ ասէ (ԺԵ.1) եւ այլն:

ԿՈՐԻՒՆ.

Երանելոյն հայեցեալ ի շնորհացն,
առեալ այնուհետեւ երանելոյն գհաւատացեալս իր, դիմել ի իշանէր,
եւ նոցա նշմարուսէր փութով գայն միջոց բարձեալ ...մերժեցնել,
իսկ երանելի գուգականին լուծալ, զՄաշքոցէ ասեմ, ...սգով պաշարեալ դնել, եւ այլն:
բ) Երկու գրքերում միեւնոյն յանախականութեամբ գործածուած են դերբա-
յական դարձուածքները, օրինակ՝

ՅՈՒՐ.

Եւ միայն ապրեալ՝ եկի պատմել Քեզ (Ա.15),
եւ անկեալ ի գետին՝ երկիր եպագ (Ա.20),
գի այժմ հանդարտեալ դադարէի, եւ ննջեցեալ հանգչէի (Գ.13-15),
տեսեալ արդարոց ծիծաղեցան (ԻԲ.19),
յիւնէն լուծալ անսային (ԻԹ.21),
եւ առեալ կին Արարայի, ծնաւ որդի (ԽԲ.17),
նաեւ՝ միաբանեալ գային, ժողովեալ փոխեցի, յարուցեալ մատուցանէր, խրատեալ
հոգացայց, եկեալ կամ... եւ այլն:

ԿՈՐԻՒՆ.

Եւ մեծամեծ պարգեւս գտեալ՝ գային հասանէին ի ժամադիր կողմանս,
եկեալ հասանէր առ իս հրաման,
յողջոյն կատարեալ հարցանէ,
միմեամբէ ֆաջալերեալք հասանիցեմք,
առեալ զիսչն պարծանաց՝ եւանէր զկնի ամեմակեցոյց խաչին, եւ յանձն առնելով
խաղացեալ գնայր,
նաեւ՝ եկեալ մտանէր, դարձեալ փութայ, երբեալ ի իշանէր, առեալ նշանակեցուք,
հայեցեալ... յայտ առնէ եւ այլն, եւ այլն: Նման կազմութիւնները հարիւրաւոր են երկու
գրքերում:

գ) Անցեալ եւ անորոշ դերբայները կիրառուած են իբրեւ ստորոգեալ:

ՅՈՒՐ.

Ոչ մեղուցեալ եւ ոչ ամպարշտեալ, կամ հաղորդեալ նամապարհի (ԼԴ.8),
իբրեւ գծառայ երկուցեալ ի Տեառնէ իւրմէ եւ զօղեալ ընդ հովանեալ (Է.2),
ապրեցուցանել զիս ի թշնամեաց, կամ ի ձեռաց հօգօրաց փրկել զիս (Ձ.23),
եւ եւ մուրեալ եւ հարկսեալ տուն ի տանէ եւ տեղի ի տեղուք... (Բ.9) եւ այլն:

ԿՈՐԻԻՆ.

Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դռնն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարժումական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն, տեղեկացեալ եւ հմուտ եղեալ... ցանկալի եղեալ, ուշ եղեալ, լուսաւորեալ, միջամուխ եղեալ, գարդարեալ (Կոր.Գ),

եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել,

գի ոմն... արդար կոչեցեալ եւ այլ ոմն կենօք երեսեալ, եւ միւսն ոմն... պահեալ, եւ միւսն արդարացեալ, ..կատարեալ, եւ զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ (Կոր.Բ),

եւ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն՝ զամենայն գործակցաց իրեանց գրով նշանակել զգալութիւնն եւ այլն:

Կորինի՛ սնորոշ ու անցեալ դերբայների խիստ առատ ռեական կիրառութիւնից չի՞ ազդուել արդեօք Ներսէս Շնորհալին Մաշտոցին նուիրած իր այս հաստատումն.

Բայց Մեսրոպայ շրջագայեալ,

Զամենեսեան լուսաբանեալ,

Վրաց ՚ւ Աղուամից գիր ստեղծեալ,

Հոգւոյն շնորհօք առատացեալ:

դ) Բաղադրեալ ժամանակաձեւեր, որ շատ է տարածուած յատկապէս Յորում:

ՅՈՐ.

Պատուեալ եւ, լուծանելոցն է, հաստատեալ իցէ, վստահեցեալ է, ղօղեալ է, գրեալ է, հրամայեալ է, հպարտացեալ էին, լեալ իցեն, նեղեալ եմ, մուրթեալ իցեմ, յարուցեալ էէ: Վերադիրով կազմութիւններ. էր այրն այն ազնուական, գործք մեծամեծք էին, բազում է զաւակ թո, զինչ է մարդն, երկայն է, հանգոյն է, ինքն է թագաւոր ամենայնի եւ այլն:

ԿՈՐԻԻՆ.

Ի մտի եղեալ էր, որ գալոցն էին, ի վարդապետութենէն էր գտեալ, եկեալն էր, վերադիրներով՝ չեն բաւական, օտար էր, էին սուրբք եւ զուարթագոյնք, էր ընդ իշխանութեամբ եւ այլն:

բ) Յարադիր բայերի կիրառութիւնը թեւ յատուկ է առեսարակ Ծ-րդ դարի գրաբարին, սակայն քննուող երկու գրքերում դրամք կարծես օրինաչափօրէն միեւնոյն գրչի տակից են ելել:

ՅՈՐ.

Լոյս արար, ակն առեալ էր, երկիր եպագ, ակն կալեալ, ձեռն արկէր, աշխատ առնէր, ի գործ ոչ արկանիցէ, ի միտ առնուցու, մի՛ ակն կալցի, յոսն կային, ունկն դիր (դիք) եւ այլն: Սակայն կան նաեւ կցական կազմութիւններ՝ զակնկալութիւն մարդոյ, ակնա-ծութիւն, ազդարարեալ:

ԿՈՐԻԻՆ.

Ի կիր արկանէ, յայտ արարեալ, ի մտի եղեալ, առաջի եղեալ, ի ձեռն առեալ, ուշ եղեալ, յամն առեալ, առաջի արկեալ, զմտու ածել, ձեռն արկանել, ի գործ արկանել, ի միտ դնել, երկիր պագանել, ձեռն արկ եւ այլն:

Վերջ բերուած լեզուական առանձնայատկութիւններին, որոնք նկատուու համար մի թեթեւ քննախոյզ հայեացքն իսկ բաւական է, պէտք է աւելացնել նաեւ մասնակի հետեւեալ մի քանի նմանութիւնները:

գ) Երկու գրքերն էլ սկսուում են ռեական իմաստով նոյն կառուցուածքով.

ՅՈՐ. Այր ոմն էր յԱսիդ աշխարհի, որում անուն էր Յոր (Ա.1):

յՈՐԻՆ. Առն, գոր մախկարգ բանիս մշանակեմք... էր Մաշտոց անուն ի Տարօնական գաւառէն (Վար.Գ): Ի դէպ, անձանց անուանելու այս եղանակը Կորիւնի մօտ հանդիպում է բազմաթիւ անգամներ, ինչպէս՝ «Ցուցանէր կայսերն, որում անուն Թեոդոս կոչէին» (Վար.ԺԶ), «...այր աստուածատէր, որում անուն էր Շարիք» (Վար.ԱԾ) եւ այլն:

է) Կորիւնը վարժում մի առիթով Մաշտոցին համեմատում է Աստուածաշնչեան հերոս Յորի հետ՝ յուսմ անելով Յորի գրքին: Դա անուղղակի կարող է վկայել, որ հեղինակն իրօք յաւատեղեակ է այդ գրքին: Եւ Յորից կատարուած այդ մէջբերումը որոշակի իմաստով նոյնպէս նմանուում է «Վարքի» սկզբին. «Այր անարատ, Յշմարիտ աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց...» (Յոր, Ա.8): Իսկ Կորիւնը Մաշտոցի մասին խօսելիս ասում է՝ «Առն... ցանկալի եղեալ իւրոց գորականաց, յուսաւորեալ... գանձն զարդարեալ..., ծանօթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան» (Վար.Գ):

Սակայն պէտք է ասել, որ նոյնիսկ այն դէպքում, երբ կենտրոնանում ենք երկու գրքերի մամուլփիւնները վերահանելու հարցի վրայ, ստեղծ-ստեղծ աչքի են զարնում նկատելի տարբերութիւններ Յորի ու Կորիւնի լեզուների միջեւ: Այսինքն՝ չի կարելի ասել, որ երկու գրքերը բացարձակապէս նման են եւ լեզուաբանական որեւէ զանազանութիւն չունեն: Դա լիցի, այդպէս նման չէին կարող լինել անգամ նոյն հեղինակի երկու տարբեր ստեղծագործութիւնների լեզուները: Այստեղ կանգ են առնում Յորի ու Կորիւնի լեզուների համակարգային տարբերութիւնների վրայ:

ա) Կորիւնը խիստ սակաւ է կիրառում գրաբարի ստորագասական եղանակի ապառնի ժամանակածեբերը, եւ չենք կարող ասել, թէ դա արդեօք բնազդուած էր վարքի ժամրային բովանդակութեամբ: Միանշեռ Յորի մօտ ապառնիով բայածեբերի կիրառութիւնն անցնում է 250-ից, որոշ բայեր նոյնիսկ հանդիպում են թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ ապառնի ժամանակածեբերով՝ խնդրեցէ-խնդրիցէ, ընդունիցի-ընկալցի, եղիցի-լինիցի եւ այլն: Իսկ Կորիւնն այս ձեւին դիմում է եզակի դէպքերում, այն է՝ հիմնականում Աստուածաշնչեան մէջբերումներ կատարելիս: Նոյնը վերաբերում է նաեւ հրամայական ժամանակածեբի կիրառութեանը:

բ) Յորի գիրքը որոշակի չափով նմանուում է, Կորիւնից բացի, նաեւ Եզնիկի լեզուին: Որոշ դրուագներում այդ նմանութիւնները պարզապէս կրկնութիւններ կամ մէջբերումներ են թուում, ինչպէս այս հատուածում՝ *ՅՈՐ.*—«Ահա հզօրն զօրացուցանէ զօրութեամբ իւրով, քանզի ո՛վ է իրբեւ զնա զօրաւոր...» (ԼՁ.22-23), *ԵՂՆԻԿ.*—«Զօրացուցանէ զանգօրս մեծագօր զօրութեամբ, եւ ինքն ոչ թերանայ ի զօրացուցիչ զօրութեանն»:

Յորի գրքի յատկապէս երկրորդ մասում նկատուում է Եզնիկի կուտ, արամարանական լեզուն, բառակրկնութիւնների միջոցով իմաստի սասուկացման հնարամէք, ինչպէս. «Ո՞ր է հայր անձրեւի, եւ ո՞վ է որ ծնաւ զշաղս ցօղոյ: Յոյր արգանդէ իլանէ ստան, եւ զեղեամն ո՞՞ ծնաւ յերկինս, որ իջանէ իրբեւ զշուր ծորեալ, եւ զերես երկնից ո՞՞ հալեաց» (ԼԸ.28-30), «Եթէ կշռելով ոք կշռէր զբարկութիւնս իմ, եւ զցաս իմ միանգամայն բառնայր ի յուն կշռոց» (ԼԸ.2), «Դանգի անձամբ անձին օգնել ոչ կարէին» (Դ.20), «սպասակաւորք սպասակեցին» (Ա. 17), «փայտաւի փայտիցէ» (ԻԷ.22) եւ այլն:

դ) Կորիւնի երկու հանդիպում են տասնեակ նորակազմ բարդ բառեր. նորագատար, արուեստախօսեալ, հայրեմակատար, թակարդապատեալ, յօրինապատգամ եւ այլն, իսկ միայն աստուած բաղադրիչով՝ աստուածապարգեւ, աստուածամեք, և

աստուածագիր, աստուածամուխ, աստուածածանօք, աստուածախօս, աստուածասեր, աստուածապատիժ, աստուածատուր և այլն: Յոբի գրքում թէև հանդիպում են նորակազմութիւններ, օրինակ՝ ոսկեհանձն, նկարակերտութիւն, շիջելափառք և այլն, սակայն հաստատրիմ հայերէն Աստուածաշնչի լեզուի պարզութեանը, այդպիսիք նրանում չիչ են:

Լեզուական հիմնական համեմատութիւններն անկուց յետոյ կրկին մտածում ես, թէ լեզուի կառուցումով հիման վրայ կատարուած համեմատութիւնը և առկայ նմանութիւնները առիթ տալի՞ս են պնդելու, որ Յոբն իրօք թարգմանել է Կորիւնը: Այդ նմանութիւնները պիտեմատիկ բնոյթ չունեն՝ արդեօք: Իսկ ի՞նչ, եթէ ասեմք, միեւնոյն գրքի թարգմանութեան վրայ գործակցել են մէկից անլի հեղինակներ, ինչը կարելի է պնդել՝ Յոբի գրքում թէ Կորիւնի, թէ Նղմիկի լեզուներին բնորոշ առանձնա-յատկութիւնների վրայ ուշադրութիւն դարձնելով: Հարցի վերջնական պարզաբանման համար բանասիրական պրպտումները պէտք է շարունակուեն:

Մեզ համար բաւական կը լինի, եթէ նայ ընդունուի, որ Յոբի ու Կորիւնի գրքերի լեզուների միջև իրօք ակնառու և ոչ պատահական նմանութիւններ կան: Եւ յետոյ՝ լեզուական բնութեան այս եղանակը կարող է քաղաքացիութիւն ստանալ այնպիսի հարցերի պարզաբանման ժամանակ, երբ պատմական տուեալները ուղղակի բացակայում են:

ՆՈՐԱՅԻ ՊՕՂՈՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Մանօթագրութիւններ

- 1 Հանդէս ամսօրեայ, 1935թ., էջ 550:
- 2 Կորիւն, Վարդ Մաշտոցի, Սրեան, 1980թ., բոլոր մէջբերումները կատարում ենք այս բնական հրատարակութիւնից:
- 3 Տե՛ս Բագմավէպ, 1935թ., էջ 239:
- 4 Մանուկ Աբղեհան, Կորիւն, Սրեան, 1980թ., Առաջաբան, էջ 65: